ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2014 թվականի N 440-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 314-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի N 517-Ա որոշման N 1 հավելվածի 91-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց>>, <<Արագյուղի <<Տիգրանակերտ կրթահամալիր>> միջնակարգ դպրոց>>, <<Գեղարդի միջնակարգ դպրոց>>, <<Մայակովսկու Հ. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Մրգաշենի միջնակարգ դպրոց>>, <<Նոր Հաճնի Մեծն Մուրադի անվան N 4 հիմնական դպրոց>>, <<Ալափարսի միջնակարգ դպրոց>>, <<Նոր Հաճնի N 3 հիմնական դպրոց>>, <<Չարենցավանի Ե. Չարենցի անվան N 5 հիմնական դպրոց>> և <<Հրազդանի N 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում իրականացված ներքին աուդիտի արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ *Լ. Նահապետյանին.*

1) <<Նոր Հաճնի Մեծն Մուրադի անվան N 4 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2014 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված 182500 (մեկ հարյուրութսունաներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը:

2) <<Ալափարսի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2014 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված 324476 (երեք հարյուր քսանչորս հազար չորս հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամը և կոմպլեկտավորման տեղեկանքում մեկ աշակերտով ավել ներկայացնելու հետևանքով ֆինանսավորված 44454 (քառասունչորս հազար չորս հարյուր հիսունչորս) ՀՀ դրամը:

3) <<Հրազդանի N 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2014 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված 159675 (մեկ հարյուր հիսունհինգ հազար վեց հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ:

4) <<Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2014 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված 97748 (իննսունյոթ հազար յոթ հարյուր քառասունութ) ՀՀ դրամը և կոմպլեկտավորման տեղեկանքում մեկ աշակերտով ավել ներկայացնելու հետևանքով ֆինանսավորված 42167 (քառասուներկու հազար մեկ հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամը:

5) <<Արուզյուղի <<Տիգրանակերտ կրթահամալիր>> միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2014 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված 12512 (տասներկու հազար հինգ հարյուր տասներկու) ՀՀ դրամը:

6) <<Գեղարդի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2014 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված 143188 (մեկ հարյուր քառասուներեք հազար մեկ հարյուր ութսունութ) ՀՀ դրամը:

7) <<Մայակովսկու Հ. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2014 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված 172613 (մեկ հարյուր յոթանասուներկու հազար վեց հարյուր տասներեք) ՀՀ դրամը:

8) <<Մրգաշենի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2014 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել կոմպլեկտավորման տեղեկանքում 2 աշակերտով ավել ներկայացնելու հետևանքով ֆինանսավորված 145892 (մեկ հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր իննսուներկու) ՀՀ դրամը:

9) <<Նոր Հաճնի N 3 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2014 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված 177176 (մեկ հարյուր յոթանասունյոթ հազար մեկ հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամը:

10) <<Չարենցավանի Ե. Չարենցի անվան N 5 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2014 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված 162268 (մեկ հարյուր վաթսուներկու հազար երկու հարյուր վաթսունութ) ՀՀ դրամը:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար ***Մ. Գարեգինյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի դեկտեմբերի 19
ք. Հրազդան